

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ռ՞ր մեծությունն են անվանում ճանապարհ:

- 1) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:
- 2) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 3) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:
- 4) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:

2 Ռ՞ր մարմնի նկատմամբ է շարժվում շարժվող գնացքի վագոնում սեղանին դրված գիրքը:

- 1) Սեղանի:
- 2) Վագոնի հատակի:
- 3) Ռելսերի:
- 4) Անշարժ նստած ուղևորի:

3 Ռ՞րն է արագացման միավորը՝ ըստ ՄՀ-ի հիմնական միավորների:

- 1) 1 մ/վ-ն:
- 2) 1 մ/վ²-ն:
- 3) 1 սմ/վ²-ն:
- 4) 1 սմ/վ-ն:

4 Ինչպե՞ս կփոխվեն ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի թռիչքի առավելագույն բարձրությունը և վերելքի ժամանակը, եթե նետման արագությունը մեծացնենք 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:
- 2) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 2 անգամ:
- 3) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կմեծանա 2 անգամ:
- 4) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:


5 Ինչպե՞ս է իրեն պահում մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե նրա վրա այլ մարմիններ չեն ազդում կամ դրանց ազդեցությունները համակշռված են:

- 1) Միշտ շարժվում է ուղղագիծ և հավասարաչափ:
- 2) Միշտ գտնվում է դադարի վիճակում:
- 3) Կամ դադարի վիճակում է, կամ շարժվում է ուղղագիծ հավասարաչափ:
- 4) Շարժվելով՝ ի վերջո կանգ է առնում:

6

Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող դահուկորդի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի n° ր միջակայքում է նրա վրա ազդող ուժերի համագործի պրոյեկցիան շարժման ուղղության վրա փոքր զրոյից:

- 1) Միայն 0 - 3 վ միջակայքում:
- 2) Միայն 3 - 4 վ միջակայքում:
- 3) Միայն 4 - 6 վ միջակայքում:
- 4) Շարժման ամբողջ ընթացքում:



7

Ստորև բերված բանաձևերից n° րն է արտահայտում տիեզերական ձգողության օրենքը:

- 1) $\vec{F} = m\vec{a}$:
- 2) $F = \mu N$:
- 3) $F = G \frac{m_1 m_2}{r^2}$:
- 4) $F_x = -kx$:


8

Ո՞ր մեծությունն է կոչվում ուժի բազուկ:

- 1) Ուժի ազդման գծից պտտման առանցքի հեռավորությունը:
- 2) Ուժի մոդուլի և պտտման առանցքից ուժի կիրառման կետի հեռավորության արտադրյալը:
- 3) Չանգվածների կենտրոնից պտտման առանցքի հեռավորությունը:
- 4) Ուժի կիրառման կետից պտտման առանցքի հեռավորությունը:

9

Նկարում պատկերված անկշիռ ձողի վրա ազդում են $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$ երկու ուժեր: Ո՞ր կետով անցնող, նկարի հարթությանն ուղղահայաց առանցքի նկատմամբ ձողը կարող է գտնվել հավասարակշռության վիճակում:



- 1) a կետում:
- 2) b կետում:
- 3) c կետում:
- 4) Ոչ մի կետով:

10

Ի՞նչ միավորով է չափվում ճնշումը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ն:
- 2) 1 Ն/մ²:
- 3) 1 կգ/մ³:
- 4) 1 Ն մ²:

11 Մարմինը լողում է հեղուկի մակերևույթին: Ո՞րն է մարմնի վրա ազդող ծանրության և արքիմեդյան ուժերի մոդուլների ճիշտ հարաբերակցությունը:

- 1) $|m\vec{g}| = |\vec{F}_u|$:
- 2) $|m\vec{g}| > |\vec{F}_u|$:
- 3) $|m\vec{g}| < |\vec{F}_u|$:
- 4) $|m\vec{g}| + |\vec{F}_u| = 0$:





12 Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:

Ազատ տատանումների առաջանալու համար անհրաժեշտ է, որ ...

- 1) հավասարակշռության դիրքից դուրս գալու համար համակարգն էներգիա ստանա:
- 2) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգում առաջանա դեպի հավասարակշռության դիրքն ուղղված ուժ:
- 3) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգի վրա ազդի պարբերաբար փոխվող արտաքին ուժ:
- 4) շփումը համակարգում լինի աննշան, որպեսզի տատանումներն արագորեն չմարեն:


13 Նկարում պատկերված են չորս տարբեր տատանումների գրաֆիկներ: Ո՞ր դեպքում է տատանումների հաճախությունն ավելի մեծ:

- 1) ա:
- 2) բ:
- 3) գ:
- 4) դ:



14 Նկարում պատկերված է ջրի մակերևույթին առաջացած ներդաշնակ ալիքի կողապատկերը ժամանակի որոշակի պահին: Որքա՞ն են ալիքի λ երկարությունը և x_0 լայնույթը:

- 1) $\lambda = 5$ մ, $x_0 = 1$ մ:
- 2) $\lambda = 2$ մ, $x_0 = 0,5$ մ:
- 3) $\lambda = 1$ մ, $x_0 = 5$ մ:
- 4) $\lambda = 0,5$ մ, $x_0 = 2,5$ մ:



15

Ո՞ր մեծությունն է կոչվում հարաբերական մոլեկուլային զանգված:

- 1) Մարմնի զանգվածի և նրա մոլեկուլների թվի հարաբերությունը:
- 2) Մոլեկուլի զանգվածի և ատոմի ($^{12}_6C$) զանգվածի $1/12$ մասի հարաբերությունը:
- 3) Մեկ մոլեկուլի զանգվածը՝ արտահայտված կիլոգրամներով:
- 4) Մարմնի զանգվածի և նրա մեջ պարունակվող նյութի քանակի հարաբերությունը:

16

Իզոթերմ պրոցեսի ընթացքում իդեալական գազի ծավալը փոքրացավ 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը:

- 1) Մեծացավ 2 անգամ:
- 2) Փոքրացավ 2 անգամ:
- 3) Մեծացավ $\sqrt{2}$ անգամ:
- 4) Չփոխվեց:

17

Ի՞նչ միավորով է չափվում մեխանիկական լարումը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ն/մ:
- 2) 1 Ն/մ²:
- 3) 1 Ն:
- 4) 1 Նմ:

18


Մարմնում էլեկտրոնների թիվը N_e է, պրոտոններինը՝ N_p , իսկ նեյտրոններինը՝ N_n : Ո՞րն է ճիշտ պնդումը, եթե մարմինը լիցքավորված է դրականապես:

- 1) $N_e > N_p$:
- 2) $N_e < N_p$:
- 3) $N_e = N_p$:
- 4) $N_e > N_n$:

19


Ո՞ր գրաֆիկն է պատկերում կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլի կախումը լիցքից ունեցած հեռավորությունից:

- 1) ա:
- 2) բ:
- 3) գ:
- 4) դ:



20 Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը հավասարակողմ եռանկյան O կենտրոնում, եթե յուրաքանչյուր գագաթում տեղադրված q կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը եռանկյան կենտրոնում E է:

- 1) 0 :
- 2) E :
- 3) $3E$:
- 4) $9E$:



21 Ո՞րն է լիցքավորված կոնդենսատորի էներգիայի սխալ արտահայտությունը (C -ն կոնդենսատորի էլեկտրաունակությունն է, U -ն՝ լարումը, q -ն՝ լիցքը):


- 1) $\frac{CU}{2}$:
- 2) $\frac{CU^2}{2}$:
- 3) $\frac{q^2}{2C}$:
- 4) $\frac{qU}{2}$:

22 Էլեկտրաչեզոք մետաղե հաղորդչում միշտ առկա են ազատ էլեկտրոններ: Ինչո՞ւ այդ դեպքում նրա շուրջը էլեկտրական դաշտ չի նկատվում:

- 1) Էլեկտրոնների շարժումը քառասային է:
- 2) Էլեկտրոնները շատ քիչ են:
- 3) Էլեկտրաչեզոք մետաղում ազատ էլեկտրոնների և իոնների գումարային լիցքը զրո է:
- 4) Էլեկտրական դաշտ ի հայտ չի գալիս, որովհետև հաղորդչալարը պատված է մեկուսիչ թաղանթով:

23 Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) $4R$:
- 2) R :
- 3) $\frac{3R}{2}$:
- 4) $\frac{5R}{3}$:



24

Ինչպե՞ս կփոխվի էլեկտրական սալիկի հզորությունը, եթե անփոփոխ լարման դեպքում նրա դիմադրությունը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կփոքրանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 4 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Չի փոխվի:

25

Ի՞նչ է էլեկտրական հոսանքը մետաղներում:

- 1) Ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժում:
- 2) Ազատ էլեկտրոնների ջերմային շարժում:
- 3) Դրական իոնների ուղղորդված շարժում:
- 4) էլեկտրոնների և դրական իոնների ուղղորդված շարժում:

26

Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Մեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
- 2) Աճում է դիսոցման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
- 3) Աճում է իոնների ջերմային շարժման միջին կինետիկ էներգան:
- 4) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:

27


Ի՞նչ միավորով է չափվում մագնիսական դաշտի հոսքը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Տլ:
- 2) 1 Հն:
- 3) 1 Վբ:
- 4) 1 Ֆ:

28

Մետաղե շրջանակում մագնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի n -ր միջակայքում է մակաձվում մոդուլով ամենամեծ էլՇՈւ-ն:


- 1) a միջակայքում:
- 2) b միջակայքում:
- 3) c միջակայքում:
- 4) Բոլոր միջակայքերում էլՇՈւ-ն ունի միևնույն արժեքը:



29

Նկարում պատկերված է կոճուր հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է ինքնամակաժման էլՇՈւ-ն, եթե կոճի ինդուկտիվությունը 6 Հն է:

- 1) 36 Վ:
- 2) 9 Վ:
- 3) 4 Վ:
- 4) 3 Վ:



30

Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Ինչպե՞ս փոխվեց կոճի մագնիսական դաշտի առավելագույն էներգիան:

- 1) Մեծացավ 3 անգամ:
- 2) Մեծացավ 6 անգամ:
- 3) Մեծացավ 9 անգամ:
- 4) Չփոխվեց:

31

Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը 120 Վ, իսկ երկրորդային փաթույթում՝ 360 Վ: Առաջնային և երկրորդային փաթույթներում զալարների թվերի n° ր տարբերակն է հնարավոր:

- 1) 100, 300:
- 2) 300, 100:
- 3) 360, 120:
- 4) 120, 240:

32

Լույսի ինչպիսի՞ աղբյուրի օգնությամբ կարելի է ստանալ կիսաստվեր:

- 1) Կետային աղբյուրի:
- 2) Բնական աղբյուրի:
- 3) Արհեստական աղբյուրի:
- 4) Աղբյուրի, որի չափերը շատ փոքր չեն մինչև առարկան հեռավորության համեմատությամբ:

33

Ինչպե՞ս է փոխվում լույսի ալիքի երկարությունը, երբ այն վակուումից անցնում է $n = 2$ բեկման ցուցիչ ունեցող միջավայր:

- 1) Մեծանում է 2 անգամ:
- 2) Փոքրանում է 2 անգամ:
- 3) Չի փոխվում:
- 4) Փոփոխությունը կախված է անկման անկյունից:

34 Ինչպե՞ս է կոչվում ապակե հատվածակողմով անցնելիս սպիտակ լույսի՝ տարբեր գույների տարրալուծման երևույթը:

- 1) Լույսի ինտերֆերենց:
- 2) Լույսի դիֆրակցիա:
- 3) Լույսի դիսպերսիա:
- 4) Լույսի անդրադարձում:

35 Մասնիկի լրիվ էներգիան քանի՞ անգամ է մեծ նրա կինետիկ էներգիայից, եթե նրա արագությունը համապատասխանում է վակուումում լույսի արագության 60 %-ին:

- 1) 2:
- 2) 3:
- 3) 4:
- 4) 5:

36 Հայելային մակերևույթին ուղղահայաց ընկնող լույսը լրիվ անդրադառնում է: Որքա՞ն է այդ մակերևույթին մեկ ֆոտոնի հաղորդած իմպուլսը:

- 1) $\frac{h\nu}{2c}$:
- 2) $\frac{h\nu}{c}$:
- 3) $\frac{2h\nu}{c}$:
- 4) $\frac{c}{\lambda\nu}$:

37 Ինչո՞ւ Ռեզերֆորդի փորձերում α -մասնիկների մեծ մասն ազատ անցնում է քիթելի միջով՝ գործնականում չշեղվելով սկզբնական ուղղությունից:

- 1) Որովհետև ատոմի միջուկն ունի դրական լիցք:
- 2) Որովհետև էլեկտրոններն ունեն բացասական լիցք:
- 3) Որովհետև միջուկի չափերը շատ անգամ փոքր են ատոմի չափերից:
- 4) Որովհետև α -մասնիկն ունի մեծ զանգված:

38 Որքա՞ն է ատոմի կլանած ֆոտոնի էներգիան, եթե էլեկտրոնը հիմնական E_1 վիճակից անցնում է E_2 գրգռված վիճակի:

- 1) E_1 :
- 2) E_2 :
- 3) $E_2 - E_1$:
- 4) $E_1 - E_2$:

39 Ի՞նչ մասնիկներից է կազմված ատոմի միջուկը:

- 1) Էլեկտրոններից և նեյտրոններից:
- 2) Էլեկտրոններից և պրոտոններից:
- 3) Պրոտոններից և նեյտրոններից:
- 4) Էլեկտրոններից, պրոտոններից և նեյտրոններից:

40 Ի՞նչ միջուկի է փոխակերպվում ${}_{12}^{27}\text{Mg}$ -ի միջուկը մեկ β - տրոհման հետևանքով:

- 1) ${}_{10}^{23}\text{Ne}$:
- 2) ${}_{11}^{27}\text{Na}$:
- 3) ${}_{12}^{26}\text{Mg}$:
- 4) ${}_{13}^{27}\text{Al}$:

41 Տրամվայը շարժվում է 72 կմ/ժ հաստատուն արագությամբ: Որքա՞ն ժամանակում այն կանցնի 500 մ ճանապարհ:

42 Որքա՞ն կրարձրանա ջուրը 0,25 մմ շառավիղ ունեցող մազական խողովակում: Ջրի խտությունը 1000 կգ/մ^3 է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ $0,075 \text{ Ն/մ}$: Ազատ անկման արագացումը 10 մ/վ^2 է: Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:

43

9 նԿլ, – 2 նԿլ և 11 նԿլ լիցքեր ունեցող երեք միատեսակ մետաղե գնդիկներ հպեցին իրար և հեռացրին: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը հեռացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^9 -ով:

44

Էկրանի ինչ-որ կետում ընթացքի $3,2 \cdot 10^{-6}$ մ տարբերությամբ երկու կոհերենտ ալիքների վերադրման հետևանքով դիտվում է չորրորդ կարգի մաքսիմում: Որքա՞ն է նույն ալիքի երկարությամբ երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարբերությունն այն դեպքում, երբ էկրանի վրա ստացվում է նույն կարգի մինիմում: Պատասխանը բազմապատկել 10^7 -ով:

100 °C ջերմաստիճանի ջրային գոլորշին խտանալով վեր է ածվում 100 °C ջերմաստիճանի ջրի: Հաստատե՞ք կամ ժխտե՞ք հետևյալ պնդումները:

1. Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին կինետիկ էներգիան փոքրացավ:
2. Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին քառակուսային արագությունը փոքրացավ:
3. Ջրի վերածվելիս մոլեկուլների կոնցենտրացիան մեծացավ:
4. Մոլեկուլների փոխազդեցության պոտենցիալ էներգիան մեծացավ:
5. Ջրի վերածվելիս ներքին էներգիան փոքրացավ:
6. Պրոցեսի ընթացքում գոլորշին շրջապատին ջերմաքանակ տվեց:

Բ մակարդակ

(46-47) 50 կգ զանգվածով բեռը պարանի օգնությամբ հավասարաչափ արագացող շարժումով դադարի վիճակից բարձրացնում են ուղղահիգ դեպի վեր: Այն առաջին 3 վ-ի ընթացքում անցնում է 27 մ ճանապարհ: Ազատ անկման արագացումը 10 մ/վ^2 է:

46 Որքա՞ն է մարմնի արագացումը:

47 Որքա՞ն է պարանի լարման ուժը:

(48-49) Բալոնում 12 կգ զանգվածով գազի ճնշումը 10^7 Պա է: Բալոնից որոշ քանակությամբ գազ հեռացնելուց հետո գազի ճնշումը դարձավ $5 \cdot 10^6$ Պա: Գազի ջերմաստիճանն անփոփոխ է:

48 Քանի՞ անգամ փոքրացավ գազի կոնցենտրացիան բալոնում:

49 Ի՞նչ զանգվածով գազ հեռացրին բալոնից:

(50-51) Արտաքին շրթայի 1 Օմ դիմադրության դեպքում աղբյուրի սեղմակներում լարումը 1,25 Վ է, իսկ 2 Օմ դեպքում՝ 2 Վ:

50 Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:

51 Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷԼՇՈւ-ն:

(52-53) Գիֆրակտային ցանցի նորմալի ուղղությամբ նրա վրա ընկնում է 2500 նմ ալիքի երկարությամբ ենթակարմիր լույս: Գիֆրակտային ցանցի 1 մմ-ի վրա պարունակվում է 200 նրբագիծ: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ է:

52 Ի՞նչ անկյան տակ կդիտվի առաջին կարգի մաքսիմումը՝ արտահայտված աստիճաններով:


53 Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկեք 10^{-13} -ով:

(54-55) Գաղարի վիճակում գտնվող ջրածնի ատոմը $-3,4$ էՎ էներգիայով գրգռված վիճակից անցավ $-13,6$ էՎ էներգիայով վիճակի: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ է: 1 էՎ $= 1,6 \cdot 10^{-19}$ Ջ:

54 Որքա՞ն է ատոմի ճառագայթած ֆոտոնի էներգիան՝ արտահայտված ջոուլներով: Պատասխանը բազմապատկեք 10^{21} - ով:

55 Որքա՞ն է ֆոտոնի՝ ատոմին հաղորդած իմպուլսը: Պատասխանը բազմապատկեք 10^{29} - ով:

(56-58) Գլանում գտնվող 2 մոլ իդեալական գազի հետ ընթացող պրոցեսը պատկերված է նկ. 1-ում: Գազի ջերմաստիճանը 1 և 3 վիճակներում համապատասխանաբար հավասար է 500 Կ և 2000 Կ: PV կորորդինատային համակարգի սկզբնակետը և 1 և 3 վիճակներին համապատասխանող կետերը գտնվում են նույն ուղղի վրա: 1-2 պրոցեսը իզոխոր է, 2-3 պրոցեսը՝ իզոբար: Գազային ունիվերսալ հաստատունը $8,3 \text{ Ջ/մոլ}\cdot\text{Կ}$ է:



56 Որքա՞ն է գազի ջերմաստիճանը 2 վիճակում:

57 Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը իզոբար ընդարձակման պրոցեսում: Պատասխանը բազմապատկել 10^{-2} -ով:

58 Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը շրջանային պրոցեսի ընթացքում:


(59-61) 600 նմ ալիքի երկարությամբ լույսի փունջն ուղղահայաց ընկնում է հարթ իդեալական հայելային մակերևույթի վրա և ազդում $33 \cdot 10^{-9}$ Ն ուժով: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ Ջ·վ է:

59 Որքա՞ն է լույսի ճնշումը հայելու մակերևույթին, եթե փնջի լայնական հատույթի մակերեսը 10^{-6} մ² է: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:

60 Որքա՞ն է հայելու մակերևույթին ընկնող ֆոտոնների թիվը 1 վ-ում: Պատասխանը բազմապատկել 10^{-18} -ով:

61 Ինչի՞ հավասար կլինի լույսի ճնշման ուժը, եթե լույսի նույն փունջը հայելու փոխարեն ընկնի բացարձակ սև մակերևույթին: Պատասխանը բազմապատկել 10^{10} -ով:

(62-65) $2 \cdot 10^{-3}$ կգ զանգված, 10^{-2} Կլ լիցք ունեցող գնդիկը կախված է 12,8 սմ երկարությամբ մեկուսիչ թելից՝ հորիզոնական ուղղված $0,5$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում (նկ. 2): Մագնիսական դաշտի ինդուկցիան ուղղված է դեպի դիտորդը: Թելը բեռի հետ շեղում են մինչև հորիզոնական դիրքն այն հարթության մեջ, որն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին և բաց թողնում: Օդի դիմադրությունն անտեսել: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է:



Նկ. 2

62 Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկեք 10^{-} ով:

63 Որքա՞ն է գնդիկի վրա ազդող Լորենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկեք 10^3 - ով:

64 Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:

65 Որքա՞ն է թելի լարման ուժը, գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկեք 10^3 - ով:

(66-69) 1 կգ և 3 կգ զանգվածով փոքրիկ գնդերը կախված են միևնույն կետից՝ 0,3 մ երկարությամբ թելերով այնպես, որ գնդերը հավում են իրար: Փոքր զանգվածով գունդը շեղում են 60° անկյան տակ և բաց թողնում՝ հաղորդելով դեպի հավասարակշռության դիրքն ուղղված և թելին ուղղահայաց 1 մ/վ արագություն: Օդի դիմադրությունն անտեսել: Ազատ անկման արագացումը 10 մ/վ^2 է:


66 Ի՞նչ արագությամբ է օժտված փոքր զանգվածով գունդը մեծ զանգվածով գնդին բախվելու պահին:

67 Ի՞նչ արագությամբ են օժտված գնդերը բացարձակ ոչ առաձգական հարվածից անմիջապես հետո: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

68 Ի՞նչ բարձրության կհասնեն գնդերը բացարձակ ոչ առաձգական հարվածից հետո: Պատասխանը բազմապատկեք 10^4 -ով:

69 Որքա՞ն մեխանիկական էներգիա վերածվեց ջերմության գնդերի բացարձակ ոչ առաձգական հարվածի հետևանքով: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

Օգտւմ, օպտիկական սեղանի վրա տեղադրված են երկու բարակ նսայնյակներ, որոնց կիզակետային հեռավորությունները մոդուլով հավասար են: Ոսայնյակների գլխավոր օպտիկական առանցքներին ուղղահայաց, նրանց կիզակետային հեռավորության մոդուլին հավասար հեռավորության վրա տեղադրված է էկրանը (նկ. 3): Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:



Նկ. 3

1. I-ին նսայնյակը ցրող է, երկրորդը՝ հավաքող:
2. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող a ճառագայթը, անցնելով I-ին նսայնյակը, ընկնում է գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետը:
3. Կիզակետով անցնող b ճառագայթն, անցնելով I-ին նսայնյակը, ընկնում է էկրանի և գլխավոր օպտիկական առանցքի հատման F կետը:
4. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող a ճառագայթն անցնելով II-րդ նսայնյակը, ընկնում է էկրանի C կետը այնպես, որ նրա մտովի ետ շարունակությունն անցնում է նսայնյակի ձախ կիզակետով:
5. b ճառագայթը, որը II-րդ նսայնյակի բացակայության դեպքում էկրանի հետ կհատվեր գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետում, նսայնյակն անցնելուց հետո ընկնում է էկրանի E կետն այնպես, որ նրա մտովի ետ շարունակությունն անցնում է նսայնյակի ձախ կիզակետով:
6. Ոսայնյակները կիպ կպցնելիս, համակարգի օպտիկական ուժը հավասարվեց զրոյի: